CIPE

բիզնեսի
բարեվարքության
ակումբ

Կորպորատիվ
Կառավարման
Կենտրոն

ԶԵԿՈՒՅՑ
ԲԻԶՆԵՍԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ

Ներածություն

Բիզնեսի բարեվարքության ակումբի (Ակումբ) շահակիցների քարտեզագրումն իրականացվել է Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի կողմից աջակցվող «Ուժեղ ասոցիացիաներ և պալատներ՝ շահերի ուժեղ պաշտպաններ» ծրագրի (Ծրագիր) շրջանակներում:

Ակումբի շահակիցների քարտեզագրումն իրականացվել է ֆոկուս խմբային քննարկումների միջոցով:

Քարտեզագրման աշխատանքներին անմիջականորեն աջակցել է Ծրագրի շրջանակներում ներգրավված մենթորը՝ հակակոռուպցիոն հավաքական գործողության գծով մասնագետ և Հավաքական գործողության միջազգային ցանցի հիմնադիր Պանա Ռաթանաբանանգկունը:

Քարտեզագրման աշխատանքներում իրենց ներդրումն են ունեցել Ակումբի խորհրդատվական խորհրդի անդամները և Ակումբի մասնակիցները:

Ակումբի շահակիցների քարտեզագրման մեթոդաբանությունը

Ակումբի շահակիցների քարտեզագրումն իրականացվել է ֆոկուս խմբային քննարկումների միջոցով: Ֆոկուս խմբերի մասնակիցների ընտրանքը կատարվել է այնպես, որ դրանցում ներկայացված լինեն մասնավոր, հանրային, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև անհատ փորձագետներ:

2024 թվականի հունվար ամսվա ընթացքում անցկացվել է երեք ֆոկուս խմբային քննարկում, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է 20 անձ:

Ակումբի շահակիցների քարտեզագրումը նպատակ է հետապնդել՝

- բացահայտել Ակումբի հիմնական շահակիցներին, դրանց դասակարգել՝ ըստ առաջնահերթությունների (ըստ Ակումբի նկատմամբ ունեցած հետաքրքրվածության և Ակումբի վրա ունեցած ազդեցության) և որոշել դրանց հետ համագործակցության հիմնական եղանակները,
- արդյունավետորեն կառավարել ռեսուրսները և նպաստել գործադրվող ջանքերի նպատակաուղղվածությանը,
- բացահայտել Ակումբի զարգացման հիմնական ուղղությունները:

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները եկել են համաձայնության որպես *շահակից դիտարկել անձանց (իրավաբանական և ֆիզիկական), որոնց գործունեությունն ու շահերն առնչվում են Ակումբի գործունեությանն ու շահերին, և որոնք կարող են էապես ազդել Ակումբի կողմից իր նպատակներին հասնելու կարողության վրա:*

Ակումբի շահակիցներին բացահայտելու նպատակով ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներին ուղղվել են հետևյալ հարցերը.

1. Ու՞մ նկատմամբ Ակումբն ունի պարտավորություններ (պայմանագրային, Ակումբի ներքին կարգավորումներով պայմանավորված):
2. Ու՞մ վրա են ազդում Ակումբի որոշումները և գործողություններն ինչպես դրական, այնպես բացասական առումներով:
3. Ո՞վ կարող է ազդել (ինչպես դրական, այնպես բացասական առումներով) Ակումբի կողմից իր նպատակներին հասնելու կարողության վրա:
4. Նախկինում ո՞ւմ հետ է համագործակցել Ակումբը:

Բացի Ակումբի շահակիցների բացահայտմանը միտված հարցերից, ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում շոշափվել են շահակիցների հետ համագործակցության հիմնական եղանակներին ու Ակումբի հետագա զարգացմանը վերաբերող հարցեր:

Ակումբի շահակիցների քարտեզագրման արդյունքները

1. **Բարձր հետաքրքրվածություն – բարձր ազդեցություն ունեցող շահակիցներ.** անձինք, որոնց նկատմամբ Ակումբն ունի պարտավորություններ կամ որոնք Ակումբի նկատմամբ ունեն պարտավորություններ (օրինակ՝ Կորպորատիվ Կառավարման Կենտրոն, Ակումբի մասնակիցներ), որոնց հետ Ակումբն ունի համագործակցության հաջող փորձառություն: Բացի այդ, համագործակցությունն ունի զարգացման զգալի ներուժ: Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները շահակիցների այս խմբին բնութագրել են որպես առավել զգայուն, քանի որ դրանք Ակումբին տվել են իրենց վստահության քվեն: Հետևաբար, դրանց հետ ներառական համագործակցության շարունակումը համարել են առաջնային խնդիր:
2. **Բարձր հետաքրքրվածություն – ցածր ազդեցություն ունեցող շահակիցներ.** անձինք, որոնք ունեն Հայաստանի գործարար հատվածում լավ կառավարման մշակույթը ջատագովելու առաքելություն: Հետևաբար, Ակումբի գործունեության նկատմամբ դրանց հետաքրքրվածությունն ապրիորի կարելի է համարել բարձր: Ազդեցությունը գնահատվել է ցածր՝ հաշվի առնելով դրանց հետ համագործակցելու փորձի բացակայությունը: Շահակիցների այս խմբի որոշ մասնակիցների հետ Ակումբը համագործակցել է, սակայն համագործակցությունն ինստիտուցիոնալ առումով դեռևս չի կայացել: Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները շահակիցների այս խմբին բնութագրել են որպես համագործակցության բարձր ներուժ ունեցող խումբ և առաջարկել Ակումբը ներկայացնելու նպատակով դրանց ուղղել համագործակցության առաջարկներ ու նախապատրաստվել հանդիպումների:
3. **Ցածր հետաքրքրվածություն – բարձր ազդեցություն ունեցող շահակիցներ.** անձինք, որոնք՝ որպես քաղաքականություն մշակողներ, գործարար շահերի պաշտպաններ, կարծիք ձևավորողներ, ֆիդուցիար պարտականություններով օժտվածներ, կարող են էապես ազդել Ակումբի գործունեության վրա, սակայն դեռևս առկա չէ Ակումբի հետ ինստիտուցիոնալ համագործակցության փորձը: Եթե նույնիսկ համագործակցություն եղել է, դա դրվագային է և որոշ դեպքերում պայմանավորված է եղել համապատասխան գերատեսչությունը կամ կազմակերպությունը ներկայացնող անձի կամքով: Այս խմբում ներառված Տնտեսական մրցակցության հանձնաժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Պետական եկամուտների կոմիտեի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ Ակումբը չունի համագործակցության փորձառություն: Հետևաբար, նրանց հետաքրքրվածության որակումը որպես ցածր կարելի է համարել պայմանական: Առաջին երեք գերատեսչությունների ներառումը քարտեզում պայմանավորվում է ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում գործարար բարեվարքության առնչությամբ նրանց վերագրվող դերով, իսկ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներգրավումը՝ ոլորտային

կազմակերպություններին պետական աջակցության տրամադրմամբ: Ըստ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցների՝ պետական աջակցություն ստացող կազմակերպությունները պետք է էապես տարբերվեն հակակոռուպցիոն համապատասխանության իրենց հանձնառությամբ և այն իրագործելու իրենց կամքով: Հետևաբար, այս գաղափարը ջատագովելու կարիք կա ոչ միայն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում, այլև մասնավորին միտված պետական աջակցության ցանկացած ծրագրի կտրվածքով: Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները կարևորեցին շահակիցների այս խմբի հետ համագործակցության բարձր ներուժը, տարվելիք աշխատանքը որակեցին որպես ծանր, սակայն՝ անհրաժեշտ: Առաջարկվեցին համագործակցության տարբեր եղանակներ, որոնք բերված են ներքևում:

4. **Ցածր հետաքրքրվածություն – ցածր ազդեցություն ունեցող շահակիցներ.** անձինք, որոնք դեռևս հետաքրքրված չեն Ակումբով և էապես չեն կարող ազդել իր առաքելությունն իրականացնելու Ակումբի կարողությունների վրա, սակայն դրանց գոյությունը չի կարելի բացառել: Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներն առաջարկեցին այս խմբին մշտապես տեղեկացնել Ակումբի գործունեության մասին:

Ակումբի շահակիցների հետ հաղորդակցման եղանակները

Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներն այն կարծիքին էին, որ շահակիցների հետ հաղորդակցումը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Այն կարող է լինել ֆորմալ և ոչ ֆորմալ, տարբեր ձևաչափերով՝ անհատական հանդիպումներ, դասընթացներ, վերապատրաստումներ, հանրային լսումներ, հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, համաժողովներ, կլոր սեղաններ, աշխատանքային խմբեր, հաղորդակցում սոցիալական ցանցերում և այլն

Երկրորդ խումբ	Առաջին խումբ
Նամակագրական կապ/էլեկտրոնային հաղորդակցություն	Նամակագրական կապ/էլեկտրոնային հաղորդակցություն
Անհատական հանդիպումներ	Ակումբի միջոցառումներում ակտիվ ներգրավվածության ապահովում
Համատեղ միջոցառումներ	Համատեղ միջոցառումներ
Աշխատանքային խմբերում ներգրավում	Անհատական հանդիպումներ
Հարցումներ	Ակումբի հանդիպումներ/քննարկումներ
Վերապատրաստումներ, դասընթացներ, համաժողովներ, կլոր սեղաններ, վարպետության դասեր	Թեմատիկ խնդիրների լուծման/դրանց վերաբերյալ Ակումբի դիրքորոշումը ներկայացնելու նպատակով աշխատանքային խմբերի ձևավորում
Ակումբի հանդիպումներին/քննարկումներին հյուրընկալում	Հարցումներ
Ակումբի լրատու	
Տարեկան հաշվետվություն	
Սոցիալական ցանցեր	

	Վերապատրաստումներ, դասընթացներ, համաժողովներ, կլոր սեղաններ, վարպետության դասեր Ակումբի լրատու Տարեկան հաշվետվություն Սոցիալական ցանցեր
Չորրորդ խումբ	**Երրորդ խումբ**
Վերապատրաստումներ, դասընթացներ, համաժողովներ, կլոր սեղաններ, վարպետության դասեր Ակումբի մասնակիցների հետ հանդիպումներին/քննարկումներին հյուրընկալում Ակումբի լրատու Տարեկան հաշվետվություն Սոցիալական ցանցեր	Նամակագրական կապ/էլեկտրոնային հաղորդակցություն Անհատական հանդիպումներ Համատեղ միջոցառումներ Աշխատանքային խմբերում ներգրավում Հարցումներ Վերապատրաստումներ, դասընթացներ, համաժողովներ, կլոր սեղաններ, վարպետության դասեր Ակումբի հանդիպումներին/քննարկումներին հյուրընկալում Ակումբի լրատու Տարեկան հաշվետվություն Սոցիալական ցանցեր

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներն առաջարկել են ապահովել Ակումբի ներկայացվածությունը սոցիալական ցանցերում, ինչպիսիք են Twiter-ը և Telegram-ը, ինչպես նաև բարձրացնել շահակիցների առաջին երեք խմբերի հետ հաղորդակցման հաճախականությունը:

Ակումբի հետագա զարգացման վերաբերյալ ֆոկուս խմբային մասնակիցների օգտակար կարծիքները և մոտեցումները

Ակումբը հսկայածավալ աշխատանք ունի անելու: Բարեվարքության մասին խոսելիս մինչ օրս կշեռքի նժարը թեքվում էր դեպի հանրային հատվածը: Բարեվարքությունը մեկն է, և առանց մասնավոր և հանրային հատվածներում բարեվարքության չափանիշների հավասարազոր կիրառման՝ կոռուպցիայի կանխարգելման և պայքարի գործընթացում հաջողելու հավանականությունը չափազանց ցածր է: Այս հարցում Ակումբը կարող է ստանձնել առաջնորդող դերակատարում:

Ակումբն առաջիկա երեք տարիների համար որպես կատարման ենթակա գործողություն կարող է ընդունել.

1. Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների մոնիթորինգի վերաբերյալ ՏՀԶԿ զեկույցը, որում, մասնավորապես, անդրադարձ է կատարվում Հայաստանի կորպորատիվ կառավարման միջավայրին: *ՏՀԶԿ զեկույցի ընդհանուր եզրակացությունն այն է, որ Կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրարկման*

համար անհրաժեշտ կառուցակարգերը ներկայումս բացակայում են, ինչը խոչընդոտում է ընկերությունների կողմից Կանոնագրքին հետևելուն ու ընկերությունների կառավարման պրակտիկայի բարելավմանը:

2. ՀՀ կառավարության 2023թ.-ի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026թթ.-ի հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026թթ.-ի գործողությունների ծրագիրը (Ծրագիր), մասնավորապես՝ Գործողություն 4.1.-ը՝ Գործարար ոլորտում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր՝ զարգացնելով կորպորատիվ կառավարման մշակույթը, որի կտրվածքով Կորպորատիվ Կառավարման Կենտրոնը ճանաչվել է համակատարող:

Անհրաժեշտ է շարունակել գործարար հատվածի՝ լավ կառավարման, բարեվարքության, կոռուպցիայի դրսևորումների և կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ իրազեկումը և համապատասխան կարողությունների զարգացումը: Որպես հնարավոր թեմա առաջարկվել է բիզնեսի ներգրավվածությունը քաղաքական ֆինանսավորման մեջ:

Ակումբը պետք է իր ջանքերն ուղղի գործարար մտածելակերպը փոխելուն. ընկերությունները պետք է ընկալեն ոչ միայն իրենց տնտեսական, այլև սոցիալական դերը:

Իր տեսանելիությունն ապահովելու նպատակով Ակումբը պետք է աշխատի ներգրավել հանրային նշանակություն ունեցող, խոշոր հեղինակավոր ընկերությունների և ինչքան հնարավոր է հեռավորություն պահի հանրային հատվածից: Վերջին մտքի հետ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներն արտահայտեցին իրենց անհամաձայնությունը հետևյալ ձևակերպմամբ՝ «մասնավոր հատվածում ազնվության, թափանցիկության և էթիկայի չափանիշների բարձրացումը պահանջում է բազմաթիվ շահակիցների, այդ թվում՝ հանրային հատվածի հետ համաձայնեցված, կայուն և հավաքական գործողություն»:

Անհրաժեշտ է ջատագովել, որ մասնավոր հատվածին միտված պետական աջակցության ծրագրերում որպես ընտրության չափորոշիչ ընդունվի ռեցիպիենտ ընկերություններում հակակոռուպցիոն գործուն ծրագրի առկայությունը:

Ակումբի շահակիցների իրական պատկերը բացահայտելու համար ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներն իրենց հերթին բարձրաձայնել են մի շարք հարցեր, որոնցից ամենաէականն է՝ ինչպիսի՞ն է Հայաստանում ձեռնարկատիրության էկոհամակարգի ներկա վիճակը:

Քննարկման ընթացքում չհաջողվեց ստանալ հարցի օբյեկտիվ և համակողմանի պատասխանը: Այդ իսկ պատճառով փորձ է կատարվել հուզող հարցի պարզաբանումը գտնել հետազոտական աղբյուրներից, համաձայն որոնց՝

> վերջին տարիներին Հայաստանում արձանագրվել է ձեռնարկատիրության բարձր մակարդակ: Հայաստանի բնակչության 28%-ը զբաղվում է որևէ բիզնեսով (ինչպես սկսնակ, այնպես էլ կայացած), և այս ցուցանիշով Հայաստանը 6-րդն է 50 երկրների մեջ: Սկսնակ ձեռնարկատիրության մակարդակով Հայաստանը բավականին բարձր դիրքում է. յուրաքանչյուր 5-րդը ներգրավված է որևէ տեսակի սկսնակ ձեռնարկատիրական գործունեության մեջ (21%): Այդ ցուցանիշով Հայաստանը

զբաղեցնում է 7-րդ տեղը 50 երկրի շարքում և 1-ինն է Արևելյան Եվրոպայում: Հայաստանն առաջատարներից է ձեռնարկատիրական գործունեության մեջ երիտասարդների ներգրավվածության մակարդակով:

Դրա հետ մեկտեղ, կայացած բիզնեսի ցուցանիշով (չափահաս բնակչության 7.8%) Հայաստանը միջին դիրքում է (23-րդը 50-ից): Սա, ըստ էության, փաստում է Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման փուլում ինստիտուցոնիալ խոչընդոտների առկայության մասին և նշանակում, որ երկրում շեշտը պիտի դրվի սկսնակ բիզնեսին սատարելու ու վերջինիս զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու վրա:

Հայաստանում ձեռնարկատիրությամբ զբաղվելն ունի դրական նախադրյալներ, ինչպիսին է, օրինակ՝ «բիզնեսը ցանկալի կարիերա է» և «բիզնեսի նպատակը սոցիալական խնդիրներ լուծելն է»: Մյուս կողմից ծանրակշիռ են նաև բացասական նախադրյալները, օրինակ՝ հասարակության եկամուտների ցածր մակարդակը, ինչի մասին փաստում է կարիքից դրդված բիզնես սկսելու ամենատարածված շարժառիթ լինելը: Ձեռնարկատերերի շուրջ 90%-ը համաձայն է պնդման հետ, որ ձեռնարկատիրությամբ զբաղվում են «ապրուստ վաստակելու նպատակով, որովհետև աշխատանք չկա», մինչդեռ նպատակասլաց դրդապատճառի՝ «աշխարհում մի բան փոխելու» ցանկությամբ բիզնես սկսելու ցուցանիշով Հայաստանն ամենացածր դիրքերում է (47-րդը 50-ից):

Հավանաբար, նաև այս գործոնն է պատճառը, որ Հայաստանում ձեռնարկատիրության կենտրոնացումը 2 ճյուղում՝ գյուղատնտեսությունում և առևտրում, բարձր է: Ընդ որում, ամենացածր արտադրողականությունն ունեցող ճյուղի՝ գյուղատնտեսության մասնաբաժնով Հայաստանն առաջին տեղում է, իսկ ամենաբարձր արտադրողականությունն ունեցող ճյուղի՝ բիզնես ծառայությունների մասնաբաժնով վերջին տասնյակում:

Հայաստանում ձեռնարկատիրության կարևոր առանձնահատկություն է ձախողվելու վախը, որի պատճառով շատերը նախընտրում են բիզնեսով չզբաղվել: Սա, թերևս, կարելի է բացատրել հայկական բիզնես մշակույթով, որտեղ բիզնեսը նույնացվում է դրա սեփականատիրոջ հետ, և բիզնեսի ձախողումն ընկալվում է որպես անձնական ձախողում:

Ակումբի SWOT վերլուծությունը

Հաշվի առնելով Ծրագրի շրջանակներում մենթորի հետ համագործակցությունը, ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների մոտեցումները և հիշյալ հետազոտության արդյունքները՝ կատարվել է Ակումբի SWOT վերլուծությունը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. Լավ կառավարման, այդ թվում՝ բարեվարքության սկզբունքը հարգող ակտիվ մասնակիցներ (կազմի շուրջ 60%) 2. Արդյունավետ համագործակցություն ՀՀ արդարադատության նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ 3. Ֆինանսական և տեխնիկական աջակցությունը CIPE-ից, CLDP-ից, IFC-ից 4. ԿԿԿ ռեսուրսները և մասնագիտական փորձաքննությունը	1. ՀՀ հակակոռուպցիոն 2023-2026թթ. նոր ռազմավարությունն ու դրանից բխող գործողությունների ծրագիրը 2. Երիտասարդ գործարարների կողմից լավ կառավարման մշակույթը հարգելը և դեպի շահակիցները միտվածությունը 3. Հայաստանում բարեվարքության և հակակոռուպցիոն համապատասխանության խթանման հարցում միջազգային կազմակերպությունների և դոնորների հետաքրքրվածությունը
ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	**ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**
1. Ֆինանսավորման չդիվերսիֆիկացված աղբյուրները 2. Մասնակիցների որոշ մասի անտարբերությունն ու պասիվությունն Ակումբի գործունեության նկատմամբ (20%) 3. Մարդկային սահմանափակ ռեսուրսները	1. Հայաստանյան գործարար հատվածի կենտրոնացումը կարճաժամկետ նպատակների վրա և բիզնեսը որպես միայն ապրուստի միջոց դիտարկումը 2. Շուկայի հիմնական դերակատարների, այդ թվում՝ պետական մարմինների կողմից կորպորատիվ կառավարման չդիտարկումը որպես առաջնահերթություն 3. Հայաստանի առջև ծառացած աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական մարտահրավերը 4. Բիզնեսով զբաղվելու դեպքում ձախողվելու վախը

Ակումբի գործողությունների տարեկան ծրագիրը՝ ըստ առաջնահերթությունների և իրագործման ժամկետների[1]

	Բարձր առաջնահերթության	Միջին առաջնահերթության
Կարճաժամկետ **(< 6 ամիս)**	Հայտի ներկայացում «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի» (Ծրագիր) իրականացման, մշտադիտարկման նպատակով նախատեսված հակակոռուպցիոն աշխատանքային խմբում ներառվելու նպատակով (հայտը ներկայացված է) Ծրագրի 4.1 գործողության իրականացման նպատակով հանդիպում ՀՀ էկոնոմիկայի և արդարադատության նախարարությունների պատասխանատուների հետ (հանդիպումը կայացել է: Ս.թ. մարտի 21-ին ԿԿԿ-ն, Ակումբը CLDP-ի աջակցությամբ հրավիրում են աշխատաժողով, որն անմիջականորեն կապված է 4.1 գործողության հետ) Լավ կառավարմանը և հակակոռուպցիոն համապատասխանությանը նվիրված իրազեկման միջոցառումների կազմակերպում Ակումբի ներկայացվածության ապահովում Twiter և Telegram սոցիալական ցանցերում Շահակիցների 2-րդ և 3-րդ խմբերին համագործակցության նամակների հասցեագրում և հնարավորինս Ակումբով հետաքրքրվածության և ազդեցության բարձրացում Ակումբի մասնակիցների կարողությունների զարգացում, հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության վերլուծությունների և հաշվետվականությանն աջակցման միջոցով	Ծրագրի 4.1 գործողությամբ նախատեսված ԿԿ կանոնագրքի վերանայում, ըստ 2023թ.-ին վերանայված G20/OECD ԿԿ սկզբունքների, և շահակիցների հետ քննարկում Ակումբի բաց հանդիպումների կազմակերպում՝ պետական մարմինների, մասնավոր հատվածի, միջազգային կառույցների ներկայացուցիչների հյուրընկալմամբ

[1] Ակումբի գործողությունների ծրագիրը մշակվել է մեկ տարվա համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահակիցների քարտեզագրման վարժանքը կատարվելու է տարեկան կտրվածքով:

Միջնաժամկետ **(6 - 12 ամիս)**	Լավ կառավարմանը և հակակոռուպցիոն համապատասխանությանը նվիրված իրազեկման միջոցառումների կազմակերպում Ակումբի կարողությունների զարգացում, հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության վերլուծությունների և հաշվետվականությանն աջակցման միջոցով Ջատագովում, որ մասնավոր հատվածին միտված պետական աջակցության ծրագրերում որպես ընտրության չափորոշիչ ընդունվի ռեցիպիենտ ընկերություններում հակակոռուպցիոն գործուն ծրագրի առկայությունը: Երիտասարդ գործարարների համար բարեվարքության դպրոցի կազմակերպում Երիտասարդ գործարարների համար ESG դպրոցի կազմակերպում	Ծրագրի 4.1 գործողությամբ նախատեսված ԿԿ կանոնագրքի վերանայված նախագծի ներկայացում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Ակումբի բաց հանդիպումների կազմակերպում՝ պետական մարմինների, մասնավոր հատվածի, միջազգային կառույցների ներկայացուցիչների հյուրընկալմամբ

Ակումբի գործողությունների ծրագրի կատարողականի հիմնական ցուցանիշները

- Հակակոռուպցիոն աշխատանքային խմբում Ակումբի ներկայացվածություն,
- Ակումբի շահակիցների առաջին խումբը 3-րդ և 4-րդ խմբերից առնվազն երկուական շահակցով համալրում,
- Ակումբի մասնակիցների համալրում առնվազն 10 մասնակցով, այդ թվում՝ հանրային, խոշոր հեղինակություն ունեցող առնվազն 2 մասնակցով,
- Լավ կառավարմանը և հակակոռուպցիոն համապատասխանությանը նվիրված իրազեկման առնվազն 10 միջոցառման կազմակերպում,
- Լավ կառավարման և հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ առնվազն 150 կազմակերպության և 200 ֆիզիկական անձի իրազեկում,
- Երիտասարդ գործարարների համար բարեվարքության դպրոցի առնվազն 30 շրջանավարտ,
- Երիտասարդ գործարարների համար ESG դպրոցի առնվազն 30 շրջանավարտ,
- Կորպորատիվ կառավարման վերանայված կանոնագրքի նախագիծ,

- Ակումբի մասնակիցների առնվազն 50%-ի կողմից Հակակոռուպցիոն համապատասխանության առաջընթացի վերաբերյալ հաշվետվության հրապարակում,
- Մասնավոր հատվածին միտված պետական աջակցության ծրագրերում որպես ընտրության չափորոշիչ ռեցիպիենտ ընկերություններում հակակոռուպցիոն գործուն ծրագրի առկայության վերաբերյալ առաջարկի ջատագովում:

(+374 99) 444 442

corpgov@corpgov.am

www.corpgov.am

CIPE

բիզնեսի
բարեվարքության
ակումբ

Կորպորատիվ
Կառավարման
Կենտրոն